

ИСТОРИЯ

Հայ ռամկավար կուսակցությունը և դրա Կահիրեի ակումբի գործունեությունը 1915-1921 թթ.

Սարգսյան Սուրեն Թ.

*ս.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)*

<https://orcid.org/0009-0005-6171-9021>

sargsyansuren@yandex.ru

ՀՏԳ՝ 327.5 (470+571, 477); EDN: CMFIOY

DOI: 10.58587/18292437-2024.1-8

Հանգուցաբառեր՝ կուսակցություն, քաղաքական գործունեություն, եղեռն, եգիպտահայեր, ռամկավար, սփյուռք, հանգանակություն, ազգանպաստ գործունեություն

Армянская партия Рамкавар и деятельность ее каирского клуба в 1915-1921 гг.

Саргсян Сурен Т.

д. и. н., профессор, ведущий научный сотрудник Института истории НАН РА (Ереван, РА)

Аннотация. Партия Рамкавар Азатакан (ПРА), одна из традиционных армянских партий, была основана в 1921 году, в результате объединения основанной в 1885 году Арменаканской и других действующих в армянской действительности партий. Промежуточным звеном в цепи Арменакан-ПРА была Армянская Конституционная партия Рамкавар (АКПР). За все время своего существования (1908-1921 гг.) партия была на стороне народа и боролась за него.

Часть армян, спасшихся от геноцида после геноцида, нашла пристанище в Египте. Рамкавары основали здесь свои местные структуры. Одной из них был Каирский клуб, который, продолжая проармянскую деятельность партии, сыграл свою роль в сохранении армянства.

Ключевые слова: партия, политическая деятельность, геноцид, египетские армяне, Рамкавар, диаспора, сбор средств, деятельность на благо нации

The Armenian Ramkavar Party and the activities of its Cairo Club in 1915-1921

Sargsyan Suren T.

Doctor of Sciences in History, professor,

Leading Researcher, at the NAS RA Institute of History (Yerevan, RA)

Abstract. The Ramkavar Azatakan Party (PRA), one of the traditional Armenian parties, was founded in 1921, as a result of the unification of the Armenakan founded in 1885 and other parties active in Armenian reality. The intermediate link in the Armenakan-PRA chain was the Armenian Constitutional Party Ramkavar (ACPR). During its existence (1908-1921), the party was on the side of the people and fought for them.

Some of the Armenians who escaped the genocide after the genocide found refuge in Egypt. The Ramkavars established their local structures here. One of them was the Cairo Club, which, continuing the pro-Armenian activities of the party, played its role in the preservation of Armenian identity.

Keywords: Party, Political Activity, Genocide, Egyptian Armenians, Ramkavar, Diaspora, Fundraising, Activities for the Benefit of the Nation

Ներածական

Նախորդ դարի վերջին քառորդից սկսած և օրրստօրե ծավալվող հայ ազատագրական շարժումը դրսևորվում էր հատկապես գաղափարախոսական ճակատում: Հայաստանի ու հայ ժողովրդի ապագայի մասին ծնվում էին նոր թեզեր և դրանց իրականացման համար նոր մոտեցումներ: Միաժամանակ խիստ գաղտնի կազմավորվում էին ազատագրական խմբակներ և նույնիսկ նոր կուսակցություններ (Ազգային միացյալ, Ինքնորոշում և այլն): Խորհրդային հատուկ ծառայություններն ակնդետ հետևում ու բոլոր հնարավոր միջոցներով փորձում էին

ոչնչացնել այդ նորաստեղծ կառույցները: Լարված ու աստիճանաբար ավելի քաղաքականացող մթնոլորտում Սփյուռքում ու Խորհրդային Հայաստանում նորաստեղծների հետ աննախադեպ սկսեցին կարևորվել հայ ավանդական՝ Դաշնակցություն, Հնչակյան և Ռամկավար կուսակցությունները: Այսինքն՝ կուսակցությունները դարձան ամբողջովին քաղաքականացած կյանքի հիմնական դերակատարներ: Այդ կուսակցականացման գործընթացն այժմ էլ զտնվում է ամենաբարձր մակարդակի վրա: Հետևաբար դրանց ծագումնաբանությունը, գաղափարական արմատներն ու էությունը

խորությամբ ուսումնասիրելը ոչ միայն անհրաժեշտ է, այլև խիստ կարևոր: Քանզի հասարակությունները որքան էլ փոփոխվեն բաղկացած են երեք հիմնական՝ իշխող-պահպանողական, ընչազուրկ-հեղափոխական և դրանց արանքում լողացող միջին խավերից՝ իրենց բոլոր ենթաշերտերով հանդերձ: Այս տեսակետից անչափ կարևոր է նորովի ուսումնասիրել հայ իրականությունում գործած կուսակցությունների ամբողջական պատմությունը, նրանց դավանած արժեքները և հատկապես գաղափարախոսությունը:

Հայ քաղաքական կուսակցությունների պատմությունը հիմնականում լավ է ուսումնասիրված: Սակայն դեռևս կան շերտեր, որոնք նորովի ու թարմ լուսարանման կարիք ունեն: Այս առումով առանձնանում է Ռամկավար Ազատական կուսակցության (ՌԱԿ) պատմությունը և, հատկապես, դրա Արմենականից-ՌԱԿ անցումային շրջանը, որի հիմնական դերակատարը Սահմանադրական Ռամկավար կուսակցությունն էր:

Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցությունը (հայկական լիբերալ-դեմոկրատական կուսակցություն, կրճատ՝ ՀՍՌԿ)¹ հիմնադրվել է 1908 թվականի հոկտեմբերի 31-ին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում՝ Վերակազմյալ հնչակյանների, Արմենականների և որոշ ազտամիտ մտավորականների կողմից: Կուսակցությունը Թիֆլիսում հրատարակել է «Վան-Տոսպ», իսկ 1919 թվականին Երևանում՝ «Հայաստանի ձայնը» թերթերը²: Նորաստեղծ կուսակցությունը թեպետ իր մեջ ձուլել էր նաև Արմենական կուսակցության ներկայացուցիչների մի ստվար խումբ, սակայն ամբողջովին հրաժարվեց արմենականության հետապնդած քաղաքական նպատակներից, ռազմավարությունից և մարտավարությունից: Նոր կուսակցությունը հայտարարեց, որ իր նպատակն է Թուրքիայում «վերականգնված» Սահմանադրության էլ ավելի դեմոկրատացումը երկրի ամբողջականության և անկախության պահպանման պայմաններում հայության ազգային ինքնության հետագա զարգացումը, մերժելով որևէ անջատողական մտայնություն: ՀՍՌԿ-ի ծրագրում [3] նշվում էր, որ այն հանդիսանում է հայկական ազգային կուսակցություն, որը միավորում է ազգի բոլոր գիտակից և կենսունակ ուժերը՝ անկախ կրոն, և դասակարգ, պատկանելությունից: Կուսակցությունը որդեգրել էր «աշխատանքի, դրամագլխի և տաղանդի կամավոր ընկերակցության» սկզբունքը: Ազգային հարցում հույս դնելով օսմանյան սահմանադրության վրա՝ հրաժարվել է Հայաստանի

անկախության գաղափարից և պատրաստ էր փոխզիջման գնալ երիտթուրքերի հետ: Կազմակերպչորեն ՀՍՌԿ-ն բաղկացած էր Կենտրոնական վարչությունից, տեղական ակումբներից և օթյակներից: Աշխարհագրական դիրքով իրար մոտ գտնվող ակումբները միանալով կազմում էին շրջանակներ:

Օսմանյան Թուրքիայում 1908 թվականին տեղի ունեցած «հեղափոխության» խաբկանքը, որը ծնունդ էր տվել Սահմանադրական Ռամկավար կուսակցությանը, շատ շուտով հայտնի դարձավ իր իրական նպատակներով: Չգալով երիտթուրքերի դավադրական էությունը, կուսակցությունը փոխեց իր քաղաքականությունը նրանց նկատմամբ: Չնայած կուսակցության գործելակերպում նկատվող որոշակի փոփոխություններին, իր երկրորդ համագումարում (1913 թվական, Կոստանդնուպոլիս) այն որոշում ընդունեց ղեկավարվել առաջին համագումարում (1911 թվական, Կոստանդնուպոլիս) ընդունված որոշումներով և ծրագրային դրույթներով՝ պաշտոնապես չփոխելով վերաբերմունքը երիտթուրքերի նկատմամբ: Սակայն հայ ժողովրդի բնաջնջման, իր հարազատ տարածքներից նրա բռնավտարման քաղաքականությունը, որ վարում էր նոր «հեղափոխական» իշխանությունը, պարտադրեց «սահմանադրականներին» սթափվել, մի կողմ նետել այդ երկրում դեմոկրատական բարեշրջումների ճանապարհով հայոց համար ազգային կեցության ու զարգացման երազախաբությունը [6, էջ 2]: Իսկ հայկական հարցի, ինչպես և երիտթուրքերի նկատմամբ դիրքորոշումն ամբողջովին և վերջնականապես փոխեց 1915 թվականի Մեծ եղեռնից հետո:

Չուզահեռաբար, հստակ դարձավ նաև, որ կուսակցության որդեգրած ծրագիրը այլևս ժամանակավրեպ է: Արդեն տասական թվականների վերջերին գործնականում հազվադեպ էր օգտագործվում կամ բնավ չէր օգտագործվում «Սահմանադրական» եզրը: 1920 թվականի սեպտեմբերին Պոլսում հրավիրվեց Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության Գ Ընդհանուր պատգամավորական ժողովը, որի ընդունած ծրագրի ամենաառաջին թեզն էր «Կուսակցութեան անունն է. Հայ Ռամկավար Կուսակցութիւն»: Շեշտվում էր նաև, որ «Թիւրքսիայ ժողովուրդի արդար դատին որով պիտի իրականանայ երկու Հայաստաններու միութիւնը և այն ժամանակ ամբողջ հայութիւնը բախտը պիտի ունենայ՝ ողջունելու Միացեալ Հայաստանի անկախութիւնը» [1.1 գ. 1, գ. 555, թթ. 197-198]: Ավելի ուշ կուսակցութիւնը նեցուկ կանգնեց Հայաստանի առաջին Հանրապետությանը: Հայաստանում և գաղթաշխարհում գործող կուսակցությունը, բավականին աշխույժ էր սկսեց համագործակցել 1917 թ. ապրիլի 11-ին

¹ ՀՍՌ կուսակցության հիմնադրման, ծրագրի, կանոնադրության ու գործունեության մասին մանրամասն տե՛ս [10]:
² Այդ պարբերականների մասին մանրամասն տե՛ս [11]:

հիմնված նույն գաղափարական դաշտում գործող Հայ ժողովրդական կուսակցության [12, էջ 52-69] հետ:

ՀՌԿ-ի կենտրոնական մարմինների գործունեության պատմությունը լուսաբանող զգալի թվով ուսումնասիրություններ կան [2; 5; 7; 8; 9; 10; 11; 13; 14; 15], սակայն Եգիպտոսում ծավալված, առավել դրա Կահիրեի մասնաճյուղի գործունեության մասին այդպիսիք չկան: Հենց այդ բացը լրացնելուն է միտված այս հոդվածը: Հիմնախնդիրը լուսաբանելուն լավագույնս նպաստել են Հայաստանի Ազգային արխիվի մի շարք ֆոնդերում տեղ գտած Ռամկավար Ազատական կուսակցության կազմավորումն ու գործունեությանը վերաբերող ՀՍՌԿ և ՌԱԿ Կահիրեի վարչության նիստերի ատենագրությունները [1.1; 1.2; 1.3; 1.4; 1.5] և մի շարք այլ կարևոր փաստաթղթեր: Ինչպես նաև մի քանի տպագիր սկզբնաղբյուրներ [3; 4] և մամուլում տեղ գտած հրապարակումներ:

Նշենք, որ 1915 թ. Հայոց Մեծ եղեռնից հրաշքով փրկված հայերի մեծ մասը ապաստանեցին Սիրիայում, Եգիպտոսում և մաքառում էին գոյատևելու համար: Սակայն կարճ ժամանակ անց, եղեռնի արյունաշատ սարսափներից, նյութական ու հոգևոր ծանրագույն պայմաններից աստիճանաբար ուշքի գալով, նրանք կարողացան իրենց մեջ ուժ գտնել, համախմբվել և հանուն հայության ապագայի շարունակել իրենց ազգանպաստ գործունեությունը: ՀՌԿ-ն աստիճանաբար դարձավ ազդեցիկ ուժ, որի օրակարգում էին Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի ազատագրության և ապագայում այնտեղ ժողովրդավարական կարգերի հաստատելու հարցերը:

Կուսակցությունը հռչակեց Օսմանեան սահմանադրությամբ հեղափոխական գործունեության շրջանի փակումը, հայ ժողովուրդին մեջ տարածեց ռամկավարական սկզբունքները: Մեծ եղեռնի տարիներին կազմակերպեց Վանի և Մուսա լեռան հերոսամարտերը, նպաստեց նորաստեղծ Հայկական Բարեգործական ընդհանուր միության հզորացմանը, թիկունք կանգնեց Հայ Ազգային պատվիրակությանը, կազմակերպեց Հայկական լեզուները [1.4, ց.6, գ. 2, թթ. 36-37]³, Միհրան Տամատյանի գլխավորությամբ հռչակեց Կիլիկիայի ինքնավարությունը⁴, լծվեց

որբահավաք բեղուն աշխատանքի և Սփյուռքի կազմակերպմանը: ՀՌԿ-ն ամենուր ձգտեց ազգային համերաշխության, իր մամուլի միջոցով տարածեց ազգային-քաղաքական գաղափարներ, ողջունեց Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը [1.1, ց., գ. 555, թթ. 197-198]:

ՀՌԿ Եգիպտոսի Կահիրեի ակումբը ևս լծվեց այդ գործին: Արձագանքելով համահայկական ու տեղական հիմնախնդիրներին ՀՌԿ այդ կառույցն օրնիբուն ուղիներ էր փնտրում և փորձում օգտակար լինել իր ժողովրդին: Այսպես, 1915 թ. սեպտեմբերի 26-ին տեղի ունեցած համագործակցող կուսակցությունների Արտակարգ նիստում որոշվում է ստեղծել Կահիրեում գործող Հնչակյան և Ռամկավար կուսակցությունների «Համագործակցող Կուսակցութեանց Չինուորական Մարմին», «որում պաշտօնը պիտի ըլլայ կամաւորական մասնաւոր ձեռնարկը վերակազմել ու զայն վարել:

Անդամ ընտրուեցան՝ Ապահ, Մլեհ, Ազադեան, Գալեմճեան ևև Ահտէրեան, Սապահգիւլեանի վերապահուելով «Նախագահի» հանգամանքը» [1.3, ց. 1, գ. 1. թ. 1]:

Մեր ձեռքի տակ առկա է ակումբի վարչության 1919 թ. օգոստոսի 12-ի նիստի ատենագրությունը, որից տեղեկանում ենք՝ «Ընկերական ժողովը վիճաբանություններ վերջ որոշեց գումարել իր անդրանիկ նիստը: Գաղտնիք բուրդկութեամբ ձեռնարկելով պաշտօնաբաշխությունը՝

*Ատենապետ՝ Ընկեր Թովմաս Միյոնքեան
Փոխատենապետ՝ Ընկեր Էօժէն Փափագեան
Ատենադպիր՝ Ընկեր Թումիկ Մեռեֆճեան
Փոխատենադպիր՝ Ընկեր Չարմայր Բէշիշեան»* և չորս խորհրդականներ [1.3, ց. 1, գ. 1. թ. 12]:

Այնուհետև ատենապետը տեղեկացնում է կուսակցության Կենտրոնի անդամներից Մկրտչյանի հետ տեսակցության մասին, որից եզրակացրել է, թե կուսակցության Կենտրոնը ցանկություն է հայտնել վերջին համակրական ժողովի անդամակցողների քվեին էլ դիմել, որպեսզի վարչության ընտրության օրինական լինելը ճանաչվեր: Վիճաբանությունները հանգում են այն դրույթին, որ. «շեշտելով հանդերձ վարչութեան օրինաւոր ընտրութիւնը կառաւարկէ նորեկներուն քուէի ալ դիմելու ազնիւ ժեսո ընել»

³ Հայկական լեզուները ստեղծելու իրավունքը ձեռք բերելուց հետո Եգիպտոսի երեք կուսակցություններից կազմված Ազգայի միության անունից այդ շարժումը գործացնելու համար ԱՄՆ են մեկնում ռամկավար Մ. Տամատյանը, հնչակյան Սապահ-Գյուլյանը և դաշնակցական Հանրմյանը:

⁴ **Տամատյան Միհրան** (1863-1945), ուսուցիչ, ազատագրական պայքարի բանաստեղծ, հրապարակագիր, կուսակցական գործիչ, Մասունի և Մուշի հերոս, Կիլիկիայի ազատագրական պայքարի ղեկավար, 1896թ. Լոնդոնի Հնչակյան կուսակցության Ընդհանուր ժողովի մասնակից, Վերա-

կազմյալ Հնչակյան կուսակցության հիմնադիրներից, ՌԱԿ Կենտրոնական վարչության նախագահ: Առաջին Աշխարհամարտի ընթացքում Սապահ Գյուլեանի և Ա. Հանրմյանի հետ մեկնել է Ամերիկա, այնտեղ Ազգային Միություն ստեղծելու և Կիլիկյան պաշտպանելու համար Արևելյան լեզուների համար կամավորներ հավաքագրելու համար: Մասնակցել է Փարիզի հայկական համագումարին: 1918 թ., եղել է հայկական պատվիրակ Հռոմում, իսկ 1919 թ. նշանակված է՝ Ամբողջական Հայաստանի պատվիրակության Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչ: Երբեմն գործածել է Լևոն Բագրատ ծածկանունը: «Արև»ի հիմնադիրներից է:

[1.3, ց. 1, գ. 1. թ. 14]: Օգոստոսի 12-ի թիվ 2 նիստի արձանագրությունից էլ տեղեկանում ենք. «Որքանիստ գործում Դաշնակցության ջանքերը գերակշիռ դիրք մը ունին և չդադարել սատարել Բարեգործական Միության» [1.3, ց. 1, գ. 1. թ. 15]: Նշենք, որ վարչությունն ակտիվորեն զբաղվում էր քարոզչական աշխատանքներով և այդ նպատակով հինգերորդ նիստում «պատրաստեց ցանկը Բորբակսկանտի հանձնախումբի եւ որոշեց զանոնք հրավիրել հաջորդ նիստին» [1.3, ց. 1, գ. 1. թ. 18]: Մեկ այլ ատենագրություն էլ ընդգծելով վարչության և անդամների գաղափարական պատրաստվածության բարձրացման կարևորությունը՝ «ընդունեց հետևեալ թերթերուն բաժանորդագրությունը. «Հայաստան» եւ «Վերածնունդ» Բարիզեն, «Կոչնակ», «Նոր կեանք» Ամերիկայէն, «Ժողովուրդի ձայն» Պոլիսէն եւ «Հայաստանի ձայն» Կովկասէն [1.3, ց. 1, գ. 1. թ. 21]:

Գաղթաշխարհում իրականացված պարբերական քարոզչությունը տալիս էր իր արդյունքները: Դա են վկայում վարչության գրեթե բոլոր նիստերում նշված մեծ թվով նորագիրների ընդունման իրողությունը և դրանց վերջնարդյունքում «Չակագիկի և Թանջայի մեջ Ռ. Կուսակցության ուրոյն ակումբներ» հիմնելու փաստը [1.3, ց. 1, գ. 1. թ. 24]: Վարչությունը նաև բաց չէր թողնում պատեհ առիթները քարոզչական աշխատանքներ իրականացնելու համար: Այսպես, ընդառաջելով բժշկական միություններից ստացված հրավերին, որոշվում է ակտիվորեն մասնակցել «ի նպատ հայ բանակին դաշտահանդէսին, իրականացնել մայիսի 28 ակտի փառաբանում» [1.3, ց. 1, գ. 1. թ. 32, թիվ 23 նիստի ատենագրություն]: Միևնույն ժամանակ, վարչությունը թիվ 25 նիստում միաձայն որոշում է կազմակերպել թատերական ներկայացում «ի նպատ Կիլիկիոյ գոյապայքարի, եւ առ այդ հովանաւորութիւնը խնդրել Ազգային Միութեան»: Ինչպես նաև ընդգծվում է աշխատանքներ տանել «Հայ կարմիր խաչը վերակենդանացնելու պէտքին վրայ» [1.3, ց. 1, գ. 1. թ. 36, թիվ 25 նիստի ատենագրություն]:

Վարչության ատենագրություններից պարզ է դառնում, որ ինչպես հայկական շատ կազմակերպություններ ու կառույցներ, այնպես էլ ՀՌԿ Կահիրեի ակումբը, ակնդետ հետևում էին և փորձում հնարավորինս սատարել Կիլիկիայում տեղի ունեցող իրադարձություններին: Վայր, որտեղ հավատալով առաջին աշխարհամարտից հետո ռազմակալած Փրանսիական իշխանությունների շոյալ խոստումներին՝ վերադարձել էին Մեծ եղեռնից փրկված հայության բեկորները: Այսպես, ակումբի վարչության 1920 թ. Մեպտեմբերի 4-ին տեղի ունեցած նիստում լսվել էին Կիլիկիայից նոր վերադարձած Ապահի (սկզբում հնչակյան ապա ռամկավար գործիչ,

1872-1928) զեկույցը: Դրանում նա մանրամասն բացատրություններ է ներկայացնում «Կիլիկիոյ գոյամարտին, անոր անցուցած փուլերուն և ներկայ վիճակին մասին, ինչպէս և Ատանայ և Տեօրթեօլի մէջ իր կատարած կազմակերպչական դերին մասին: Խոստացաւ գրաւոր ամիտի տեղեկագիր մը ներկայացնել Վարչութեան: Ժողովս հաղորդել ընկեր Ապահի խիստ շահեկան տեղեկութիւնները» [1.3, ց. 1, գ. 1. թ. 34, թիվ 2 նիստի ատենագրություն]: Մեկ այլ ատենագրությունում էլ նշվում է, քանի որ «ընկեր Վ. Քիւրքճեան Կիլիկիայէն վերադարձած էր, հրաւիրած ըլլալով, խնդրեց որ Ակումբիս ընկերահամակրական Ժողովին խօսելու յանձնառութեան հանդիւրը տայ, նկատել տրուելով, որ ինք ալ արդէն նախապէս խոստացած էր: Ժողովս որոշեց հեռագրով «Արև»ի խմբագրութեան իմացնել սա ի յայտարարութիւն ընկերներուն ու համակիրներուն» [1.3, ց. 1, գ. 1. թ. 61, թիվ 4 նիստի ատենագրություն]:

Ակումբի վարչության տեղեկագրերից պարզ է դառնում նաև, որ հայանպաստ աշխատանքներ իրականացնելու համար հաճախակի կազմակերպվել են դրամահավաքներ: Հավաքված գումարները հանձնվել են զանազան տեղից՝ այդ գործառույթն իրականացնող «Արև»ի խմբագրութեան փոխադրելու համար [1.3, ց. 1, գ. 1. թ. 42, թիվ 5 նիստի ատենագրություն]: Ինչպես նաև երբեմն խիստ կարիքավոր կուսակիցներին օգնելու նպատակով. Նկատի ունենալով «ընկեր Մլէհի ազգանուէր գործունեութիւնը, եւ իր ներկայ նիւթական նեղ վիճակը, որոշեց անմիջապէս հինգ ոսկի տրամադրել իրեն, զայն յառաջիկային բարձրացնելու համար քսանի...» [1.3, ց. 1, գ. 1. թ. 50, թիվ 17 նիստի ատենագրություն]: Կազմակերպվել են նաև այլ միջոցառումներ, որոնց նպատակը եղել է միջոցներ հայթայթել և իրենց նպատակը բերել ազգաշահ գործառույթներին. «Վարչութեանը յայտնուեցաւ, որ բժշկական միութիւններէն հրաւեր ստացած ըլլալով ի նպատ հայ բանակի սարքուէլիք դաշտահանդէսի մը, կուսակցութեանս օժանդակութիւնը բերել: Այդ պատուիրակները իրենց պաշտօնը կատարած ըլլալով եկած էին տեղեկացնել թէ ծրագրածը թէև ի նպատ հայ բանակին դաշտահանդէս մը սարքել էր, բայց եթէ անհրաժեշտ ուշադրութիւնը չընծայուէր կրնար ըլլալ Մայիս 28 ակտի փառաբանում մը, հետևաբար ազգասիրութեան արտայայտութիւնները մօժօք չձգելու համար հակառակորդ կուսակցութեանց: Ժողովը թեր ու դժ վիճաբանութիւններէ վերջ համամիտ գտնուեցաւ մասնակցելու, պայմանաւ որ Ազգային Միութիւնը հովանաւորէ զայն» [1.3, ց. 1, գ. 1. թ. 59, թիվ 23 նիստի ատենագրություն]:

ՀՌԿ Կահիրեի ակումբն իր շարքերի հետ մշտական կապ ապահովելու համար ստեղծել էր նաև «Ժողովրդային սրահ», որտեղ կազմա-

կերպվում էին տարաբնույթ միջոցառումներ: Վարչությունը նաև կոչ էր անում Կահիրեի հայ հասարակությանը «գալ օգտուի թեղթերէն, գիրքերէն եւ գիշերային ինօնօ հաստատելի դասախոսութիւններէն» [1.3, ց. 1, գ. 1. թ. 53, թիվ 21 նիստի ատենագրություն]:

Նկատենք, որ Մեծ եղեռնի արյունալի վերքն անթելելով, սփյուռքահայությունն աստիճանաբար փորձում էր ուշքի գալ և հայ քաղաքական ասպարեզում գործող կազմակերպությունների և կուսակցությունների ղեկավարությամբ համախմբել ուժերը, իրականացնել գոյատևման և հայապահպանության առաքելությունները. «Հայոց ցեղասպանութենէն, Հայաստանի առաջին Հանրապետութեան անկումէն ետք, Հայկական սփիւռքը կազմակերպելու, նորաստեղծ հայրենիքը զօրացնելու հրամայականը կը պահանջէր նոր կառոյցի մը ստեղծումը» [9, էջ 9]: Իր ազգաշահ գործունեությամբ այդ գործընթացների առաջին շարքերում էր Հայ Ռամկավար կուսակցությունն ու դրա ամրապինդ ջոկատներից Կահիրեի ակումբը, որը ոչ միայն ողջունեց, այլև բոլոր հնարավոր միջոցներով նպաստեց հայ իրականությունում սկսված համախմբման գործընթացին: Դրա արդյունքը եղավ 1921 թ. հիմնադրված և ցայսօր գործող Ռամկավար Ազատական կուսակցությունը:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)
 - 1.1. ՀԱԱ, ֆ. 200:
 - 1.2. ՀԱԱ, ֆ. 424:
 - 1.3. ՀԱԱ, ֆ. 957:
 - 1.4. ՀԱԱ, ֆ. 1159:
 - 1.5. ՀԱԱ, ֆ. 1396:
2. Նորագիր Ռամկավար Ազատականին ուղեցույցը: - Պէյրուօ, 1981:
3. Ռամկավար Ազատական կուսակցութիւն: Հիմնական ծրագրեր, կանոնագրեր եւ Վաւերագրեր: - Պէյրուօ, 1988:
4. Ռամկավար Ազատական կուսակցութեան կազմաւորումն ու գործունեութիւնը 1915-1951 թթ., փաստաթուղթերու ժողովածու: - Ե., 2022:
5. **Գասարճեան Յ.**, Նուիրում ՌԱԿ-ի ճամբով, Յիսնամեայ գործունեութեան արձանագրութիւն: - Ե., 2016:
6. **Դալլաքյան Կ.**, Արմենականության և Սահմանադրականության հետ ՌԱԿ-ի առնչությունների հարցի շուրջ, հոդված Արմենական կուսակցության 110 ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի թեզիսներ: - Ե., 1996:
7. **Դալլաքյան Կ.**, Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն (1921-1940): Գիրք առաջին: - Ե., 1999:
8. **Դանիելյան Ժ.**, Ռամկավար Ազատական մամուլը (մատենագիտական ակնարկ), առանձնատիպ «Չարթօնքի»: - Պէյրուօ, 1982:

9. **Ղազարյան Վ.**, Համառօտ պատմութիւն ՌԱԿ-ի: - Պէյրուօ, 1978:
10. **Սարգսյան Ս.**, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.): - Ե., 2009:
11. **Սարգսյան Ս.**, Արևելահայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ.: - Ե., 2019:
12. **Սարգսյան Ս.**, Հայ ժողովրդական կուսակցության հիմնումը, 2018 թ. Հայաստանի Առաջին հանրապետության 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր: - Պէյրուօ, 2019:
13. **Վարդիվառեան Հ.**, Մեծ երազի ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն ՌԱԿ-ի: Ա. Հատոր: - Նիւ Ճըրզի:
14. **Տէմիրճեան Կ.**, Ռամկավար Ազատական մամուլը երէկ եւ այսօր, «Նոր Օր-բացառիկ»: - Լոս Անճելըս, 1982, 2015:
15. **Էօրդեքեան Յ.**, ՌԱԿ-ի մամուլի խմբագիրները: - Ե., 2005:

*Տճան/Հանձնվել է՝ 17.01.2024
 Рецензирована/Գրախոսվել է՝ 22.02.2024
 Принята/Ընդունվել է՝ 28.02.2024*